**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**
**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան 13-ը փետրվարի 2020թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
**Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, Հ. Մելիքյան(ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ ՄՊ և Պ բաժնի պետ, փոխգնդապետ Ա. Մարգարյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի առաջատար մասնագետ, Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ ՊԾ զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի ՊԾ պահեստների և տեխնիկական միջոցների բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Կարապետյան:
**Գնումները համակարգող՝**
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

**« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

---

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**1. Մասնակիցների՝ ԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.**

---

(Գ.Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով բաց մրցույթի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

***ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ «Աքվատիկ» ՍՊԸ, որի ժամկետանց հարկային պարտավորությունները կազմում են 10 789 611 ՀՀ դրամ, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն առկա են, բացառությամբ «ԷԼԻՏ ՊՐՈԴ» ՍՊԸ, որի հայտը ներկայացնելու տարվան նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հաերագումարը պակաս է սույն ընթացակարգի շրջանակում ներկայացրած գնային առաջարկից:***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը և 13.02.2020թ. ծանուցել վերոնշյալ մասնակիցներին՝ ծանուցումը ստանալուց հետո հրավերով սահմանված կարգով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցները շտկել են անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 20.02.2020թ., հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցների որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

---

(Գ.Տերյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11$^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Գնահատող** Հ. Մելիքյան

**Գնահատող** Ա. Մարգարյան

**Գնահատող** Ս. Պետրոսյան

**Գնահատող** Ա. Կարապետյան

**Գնումները համակարգող՝** Գ. Տերյան